ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Դիավանտ ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/76 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	EB19-J10	PENTAX MEDICAL	Վիդեոբրոնխոսկոպ՝ նախատեսված բրոնխոսկոպիկ հետազոտությունների և միջամտությունների համար: Դիստալ ծայրի տրամագիծը՝ 6.1 մմ, ներմուծվող խողովակի տրամագիծը՝ 6.4 մմ, գործիքային (աշխատանքային) ալիքի ներքին տրամագիծը՝ 2.8 մմ, ներմուծվող խողովակի աշխատանքային հատվածի երկարությունը՝ 600 մմ: Դիստալ ծայրի ծալման անկյունը դեպի վեր՝ 180°, դեպի վար՝ 130°: Տեսադաշտի ուղղությունը՝ ուղիղ՝ 0°, տեսադաշտի անկյունը՝ 120°, տեսանելիության (ֆոկուսային) խորությունը 3–100 մմ: Էնդոսկոպը օժտված է բարձր թույլատվությամբ պատկեր ապահովող CCD տեսապատկերման մատրիցայով: Վիդեոբրոնխոսկոպը ապահովում է լիարժեք համատեղելիություն էլեկտրավիրաբուժական գործիքների և լազերային համակարգերի հետ կլինիկական կիրառման (միջամտությունների) ժամանակ: Էնդոսկոպը ամբողջությամբ ջրակայուն է, (հերմետիկ) կառուցվածքով, որը թույլ է տալիս սարքի ամբողջական ընկղմումը հեղուկների մեջ՝ ախտահանման, մաքրման և ստերիլիզացման նպատակով: Վիդեոէնդոսկոպիկ համակարգի տեղադրումը, գործարկումը և

			հետագա տեխնիկական սպասարկումը իրականացվում են բացառապես արտադրողի կողմից որակավորված և սերտիֆիկացված մասնագետի կողմից: Բժշկական գործընթացի անխափանությունն ապահովելու նպատակով, էնդոսկոպերի վնասման կամ տեխնիկական խափանման դեպքում, անհապաղ տրամադրվում է համարժեք փոխարինող գործիք: Վիդեոբրոնխոսկոպը ունի լիարժեք տեխնիկական և ծրագրային համատեղելիություն պատվիրատուի մոտ առկա Pentax Medical էնդոսկոպիկ վիդեոպրոցեսորի և լույսի աղբյուրի հետ և ապահովում է սարքերի միացումը (ինտեգրումը) առանց լրացուցիչ անցումային հարմարիչների (adapter) կամ արտաքին ձևափոխիչների: Լիարժեքորեն ապահովում է պատկերի հաղորդումը, կառավարման կոճակների ֆունկցիոնալությունը և էնդոսկոպիկ համակարգի բոլոր աշխատանքային ռեժիմների անխափան շահագործումը: Հայտով ներկայացվում է նաև պաշտոնական ներկայացուցչի կողմից տրված պաշտոնական հավաստում առկա համակարգի հետ տվյալ մոդելի լիարժեք համատեղելիության վերաբերյալ: Երաշխիքային ժամկետ՝ 2 տարի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Диавант в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/76 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
2			